

Արարատ Ղարիբջանի «Ռուս-հայերեն բառարանը»<sup>1</sup> լույս է տեսել 1968 թ., հետագայում երկու անգամ վերահրատարակվել է (1977 և 1983 թթ.): 1960-ական թթ. արդեն պահանջ էր զգացվում ստեղծելու այսպիսի միահատոր ռուս-հայերեն բառարան: Նախ, նախորդ ծավալուն ռուս-հայերեն բառարանը<sup>2</sup> իր բազմահատորության և կազմության սկզբունքներում ունեցած որոշ թերությունների պատճառով այնքան էլ հարմար չէր օգտագործման համար: Այնուհետև, քառահատոր բառարանի հրատարակումից հետո անցած ժամանակամիջոցում, բնականաբար, որոշակի տեղաշարժեր էին կատարվել ռուսաց և հայոց լեզուների բառապաշարներում, շարունակվել էր նրանց բառային կազմերի հետագա կայունացումն ու նորմավորումը: Այս միահատոր բառարանը ժամանակին բարձր է գնահատվել մամուլում<sup>3</sup> և արժանացել է Հայկական ՍՍՀ պետական մրցանակի:

Ար. Ղարիբջանի «Ռուս-հայերեն բառարանն» ընդգրկում է մոտ 85000 բառահոդված և 100000 բառ, շուրջ 20000 դարձվածաբանական միավոր: Հեղինակը բառարանը սկսել է կազմել 1950 թ.<sup>4</sup> հիմք ունենալով Հ. Դաղբաշյանի «Լիակատար բառարան ռուսերենից-հայերեն»<sup>5</sup> աշխատությունը, «Ռուս-հայերեն նոր բառարանը»<sup>6</sup>, ինչպես նաև պրոֆեսոր Դ. Ն. Ուշակովի խմբագրությամբ հրատարակված «Ռուսաց լեզվի բացատրական բառարանը»<sup>7</sup>: Հետագայում հեղինակը երկու անգամ վերակազմել է իր բառարանը: Առաջին անգամ՝ քառահատոր ռուս-հայերեն, ապա՝ ռուսերեն ժամանակակից գրական լեզվի տասնյոթհատորանոց բառարանի<sup>8</sup> և ռուսաց լեզվի ակադեմիական քառահատոր բացատրական բառարանի<sup>8</sup> լույսընծալումից հետո: Ծիշտ է, թեև հեղինակն օգտագործել է նշված աղբյուրները, բայց նրա բառարանի հիմքը կազմում է հիաստորեն նախորդ՝ քառահատոր ռուս-հայերեն բառարանը: Եվ դա հասկանալի է, քանի որ քառահատոր բառարանը ռուսական բառացանկի քանակով գերազանցում է նշված մյուս աղբյուրներին (բացառությամբ տասնյոթ հատորանոց բառարանի): Հեղինակը կարողացել է իր աշխատության մեջ հմտորեն օգտագործել այդ բառարանի առավելությունները, հայ բառարանագրություն բե-

1 Ա. ր. Ղարիբջան. Ռուս-հայերեն բառարան. Երևան, 1968: Հոդվածում օրինակները բերված են 2-րդ (1977 թ.) հրատարակությունից:

2 Ռուս-հայերեն բառարան շորս հատորով. Երևան, 1954—1958:

3 Տե՛ս Կ. Գ ու ը դ ա ղ յ ա ն. Արժեքավոր աշխատություն.—«Բանվոր», Լենինական, 19 փետրվարի 1969: Գ. Կ. Տ ա մ վ ե յ ա ն. Новый русско-армянский словарь.—Русский язык в армянской школе, 1969, № 2. Ա լ. Մ ա ղ բ ա ղ յ ա ն. Մեծարժեք աշխատություն.—«Սովետական դպրոց», 18 նոյեմբերի 1970: Գ ը. Գ ը ի զ ո ղ յ ա ն. Բառարանագրության նոր առաջընթաց.—«Սովետական Հայաստան», 9 հունիսի 1972:

4 Հ. Դ ա ղ բ ա ղ յ ա ն. Լիակատար բառարան ռուսերենից-հայերեն. Թիֆլիս, 1906:

5 Ռուս-հայերեն նոր բառարան. հ. 1—2, Երևան, 1933—1935:

6 Толковый словарь русского языка, под. ред. Д. Н. Ушакова. Т. 1—4. М., 1935—1940.

7 Словарь современного русского литературного языка. Т. 1—17, М.—Л., 1950—1965.

8 Словарь русского языка, в 4-х томах. М., 1957—1961.

րած նորությունները և ձգտել է, ըստ հնարավորին, ազատվել նրանում տեղ գտած աննշտություններից և սկզբունքային թերություններից:

Ար. Ղարիբջանի բառարանն իր բառահոգվածների կառուցվածքով որոշ նորություններ է բերում ուսու-հայերեն բառարանագրության մեջ: Այդ նորությունները պայմանավորված են բառարանի բնույթով և հիմնականում ուղղված են մեկ նպատակի՝ տեղի խնայողությանը: Այսպես, բառարանում գլխաբառը թեք գծիկով բաժանված է անփոփոխ և փոփոխական մասերի (բոլոր այն դեպքերում, երբ այդպիսիք կան), իսկ բառահոգվածում բառի անփոփոխ մասի փոխարեն կամ կթև բառը շունի որևէ նոր վերջավորություն գործածված է ալիքագիծ: Օրինակ՝ *машина*—*լ. մեքենա. паровая*~շտգեմեքենա, *швейная*~կարի մեքենա. *печатная*~տպագրական մեքենա. *сельскохозяйственные*~Կլտառտնտեսական մեքենաներ, *пускать*~*յ մեքենան գործի գցել՝ բանեցնել: շտտեկտով ուսու-ազգային բառարանագրության մեջ վերջին տարիներին ընդունված սկզբունքին, Ար. Ղարիբջանն իր բառարանում իրավացիորեն նվազագույնի է հասցրել քերականական նշումները և քերականական ձևերը: Բառարանում չեն նշված գոյականների սեռականի և հոգնակիի ձևերը, բայերի ներկա կամ ապառնի ժամանակների տարբեր դեմքերի վերջավորությունները, անկանոն խոնարհման ձևերը: Չեն տրված նաև ածականների իգական և շեղոք սեռերի վերջավորությունները և կարճ ձևերը:*

Այդ բացը լրացված է բառարանին կցված «Համառոտ տեղեկատու ուսաց լեզվի հնչյունական կազմության, դրույթյան և ձևաբանության շուրջը» հավելվածով (էջ 111—112), ուր ամենահիմնական և անհրաժեշտ տեղեկություններն են տրված ուսաց լեզվի հնչյունաբանության, գրույթյան և արտասանության, ձևաբանության և բառակազմության մասին: Հեղինակն առանձնակի ուշադրություն է դարձրել ուսերենի այն յուրահատկություններին, որոնք բացակայում են հայոց լեզվում և կարող են հայ ընթերցողի համար զժվարություններ ներկայացնել, ինչպես՝ հնչյունաբանության մեջ՝ բաղաձայնների քրմայնացմանը, ձևաբանության մեջ՝ գոյականների սեռի կամ բայերի կերպի քերականական կարգերին, ուսերենում շեշտի հետ կապված արտասանության յուրահատկություններին և այլ երևույթների: Բառարանի վերջում կցված են ուսերենի հոլովման և խոնարհման հիմնական օրենքներից շեղումներ ունեցող գոյականների և բայերի համառոտ աղյուսակներ (էջ 1427—1433):

Գլխաբառից անմիջապես հետո բառարանում կան հետևյալ նշումները: Գոյականների մոտ նշված է նրանց սեռը, բայերի մոտ՝ կերպը, իսկ մյուս խոսքի մասերի համար՝ միայն նրանց խոսքիմասային պատկանելությունը: Ապա տրված են ոճաբանական և այլ կարգի նշումներ, ընդ որում, եթե նշումն անմիջապես բառից հետո է, վերաբերում է տվյալ բառի բոլոր նշանակություններին, իսկ որն է նշանակությունից առաջ եղածը վերաբերում է միայն այդ նշանակությանը: Բառի տարբեր իմաստները ուսու-հայերեն բառարանում բաժանված են արաբական թվանշաններով: Այնուհետև տրվում է գլխաբառի թարգմանությունը, իսկ շատ հաճախ նաև՝ բացատրությունը: Բառարանագիրն իր առջև նպատակ է դրել ըստ հնարավորին լրիվ ներկայացնել ուսերեն բառի բոլոր հիմնական և փոխաբերական իմաստները և իմաստների նրբերանգները: Եթե ուսերեն բառը զժվար է թարգմանել հայերեն մեկ համաժեք բառով, հեղինակն օգտագործել է հայերենի մի քանի հոմանիշ ձևեր, ընդ որում ուսերեն բառի իմաստին առավել մոտ և հանձնարարելի հայերեն հոմանիշը միշտ զրբվում է առաջին տեղում, իսկ այնուհետև տրվում են մյուս հոմանիշները՝ ըստ իմաստի համապատասխանության նվազման: Օրինակ՝ *оалаганный*—*Չ. փխբ. խեղկատակի, խեղկատակային, խեղկատականոցի, միմոսական, բալագանի: Буйство*—կատաղություն, սանձարձակություն, մոլեգնություն, խելահեղություն, վայրագ անկարգություն: *Падиться*—*1. խ ս կ ց. հանախ ժխտակեցով. գլուխ տալ, հաշողվել, կարգավորվել, կարգի բերվել:*

Բայերի կերպային զույգերից բառարանում, ինչպես ընդհանրապես ընդունված է ուսական բառարանագրության մեջ, թարգմանված է միայն մեկը

(հիմնականում կատարյալը), իսկ մյուսի համար հղում է արված թարգմանված ձևին: Օր.՝ навязывать—անկատ. навязать | լայլի: Обнаруживать—անկատ. обнаружить լայլի: նաև՝ нагнести—կատ. нагнетать լայլի:

Ռուս-հայերեն բառարանագրության մեջ այս բառարանի բերած նորություններից մեկն էլ այն է, որ նրանում առաջին անգամ բառահոգվածում, անհրաժեշտության դեպքում, թարգմանությունից առաջ, փակագծերի մեջ տրված է նաև ռուսերեն բառի տվյալ նշանակության հոմանիշը: Օրինակ՝ жестокій—ած. 1 (безжалостный) դաժան, անգութ, անազորույն, անողորմ, վայրագ: Покойно—մկր. 1 (спокойно) հանգիստ կերպով, հանդարտորեն: 2. (удобно) հարմար կերպով: Սա հարմար է ոչ միայն ռուսերենը նոր սովորողների համար, այլև բառարանից օգտվողին հնարավորություն է տալիս բառի տվյալ նշանակության այլ մանրամասներին ծանոթանալ նշված հոմանիշի բառահոգվածում:

Ար. Ղարիբջանի աշխատության աչքի ընկնող առավելություններից է ցուցադրական նյութի ճիշտ, դիպուկ ընտրությունը և տեղին կիրառումը: Հեղինակն իրավացիորեն հրաժարվել է բառերի լուսարանման համար բնագրային օրինակներ բերելու և դրանք թարգմանելու՝ քառահատոր բառարանում ընդունված սկզբունքից: Մուլն աշխատության մեջ օրինակները տրված են բառի համապատասխան հիմաստի թարգմանությունից և բացատրությունից հետո: Որպես օրինակ բերված են բառակապակցություններ, ըստ որում դրանց ղգալի մասը կայուն կապակցություններ են, խիստ հազվադեպ՝ նաև նախադասություններ, որոնք վերջված են ռուս գրականությունից: Օրինակ՝ фамилия/ый—ընտանեկան, տոհմական, ժառանգական, ազգակցական, արենակցական, գերդաստանական. ~ архив տոհմական արխիվ. ~ ое схождение ժառանգական նմանություն. ~ склеп գերդաստանական դամբարան: Тягость—1. Ծանրություն, դժվարություն, զարշարանք, դժնդակություն, տանջալիություն. ~ налоговый հարկերի ծանրություն. ~ впечатления տպավորության դժնդակություն: Բառարանում բերված օրինակները ոչ միայն ընթերցողին օգնում են առավել ճիշտ ընկալել ռուսերեն բառի հիմաստը, ոչ միայն ցույց են տալիս տվյալ բառի կիրառության ոլորաները, այլև, ինչպես նշված օրինակներից է երևում, բառարանից օգտվողին հնարավորություն են տալիս որպես ռուսերեն բառի համարժեքներ բերված հայերեն հոմանիշներից ընտրել տվյալ համատեքստին առավել համապատասխան թարգմանությունը: Բացի այդ, բնագրային օրինակների փոխարեն բառակապակցությունների օգտագործումը թույլ է տալիս մեծ չափով տեղ խնայել, որը պակաս կարևոր չէ ընդարձակ միահատոր բառարանի համար:

Տեղ շահելու նպատակով, բառահոգվածում հոմանիշ լրացումներն անջատված են բուլթով: Սա նշանակում է, որ ամեն մի հոմանիշ լրացում պետք է վերցնել ընդհանուր լրացյալի հետ առանձին: Օրինակ՝ линза—լ. ոսպնյակ, տեսապակի, ոսպնյակ, լինզա. ~ микроскопа մանրադիտակի տեսապակի՝ ոսպնյակ: Օրինակը պետք է կարդալ՝ մանրադիտակի տեսապակի, մանրադիտակի ոսպնյակ: Ցուցադրական նյութի՝ բառակապակցությունների ընտրության և օգտագործման այս համակարգը ռուս-հայերեն բառարանագրության մեջ այսօրվան լայնորեն առաջին անգամ կիրառված է Ար. Ղարիբջանի բառարանում:

Բառահոգվածի վերջում, հատուկ նշանից հետո, տրված են տվյալ բառով կազմված դարձվածքները, կայուն կապակցությունները, բաղադրյալ տերմինները:

Բառարանում բոլոր գլխաբառերն ունեն շեշտ (բացի միավանկ բառերից, որոնց շեշտի տեղն ինքնըստինքյան հասկանալի է): Եթե ռուսերեն բառն արտասանվում է երկու շեշտով, ապա բառի վրա դրված է կրկնակի շեշտ, ինչպես՝ синонимия, анапест: Կրկնակի շեշտ ունեն նաև հարադիր բարդությունները, եթե նրանց բաղադրիչներն արտասանվում են ինքնուրույն շեշտով, օրինակ՝ военно-морской, идейно-политический, анархо-синдикализм և այլն:

Բառարանում բառահոգվածում, իրավացիորեն, ընդհանրապես տառադարձման կամ որևէ այլ միջոցով չեն տրված ռուսերեն բառերի ճիշտ արտա-

սանության ձևերը: Սակայն որոշ դեպքերում արտասանությունը նշելն անհրաժեշտ է: Օրինակ, ուսերենի այն բառերի համար, որոնք ունեն շեշտի հետ կապված կրկնակի արտասանություն: Այդպիսի բառերը բառարանում տրված են ուղղակի երկու շեշտով (ինչպես՝ иначе, обух, творог և այլն): Սա կարող է ուսերեն վարժ շիմացող ընթերցողին թյուրիմացության մեջ գցել, շփոթության տեղիք տալ: Շեշտի հետ կապված երկակի արտասանություն ունեցող баржа, договор բառերն էլ բառարանում ներկայացված են ընդհանրապես մեկ շեշտով: Որևէ ձևով չեն նշված նաև այն բառերը, որոնք արտասանվում են առանց շեշտի (դրանք սովորաբար նախդիրներն ու շաղկապներն են):

Քառահատոր ուս-հայերեն բառարանը ժամանակին քննադատության էր ենթարկվել այն բանի համար, որ ուսերեն բառի տարբեր իմաստները, այն դեպքերում, երբ համապատասխանաբար հայերեն արտահայտվում են միևնույն բառով, բառարանում առանձնացված են, և ամեն մի առանձին նշանակության համար կրկնված է հայերեն միևնույն բառը, որի պատճառով բազմաթիվ բառահոգվածներ խիստ ծանրաբեռնված են: Ար. Ղարիբջանի բառարանում այդ թերությունը հիմնականում վերացված է, և այն դեպքերում, երբ ուսերեն բառն ու նրա հայերեն թարգմանությունը իրենց նշանակություններով լրիվ կամ մասնակիորեն համընկնում են, ապա բառահոգվածում դրանց համընկնող իմաստները իրավացիորեն չեն առանձնացվում (համտ. երկու բառարաններում, օրինակ, амортизация, арматура, либерализм, театр, фаза և շատ այլ բառերի թարգմանությունները):

Այս բառարանի ուսական բառացանկն իր քանակով որոշ չափով զիջում է քառահատոր ուս-հայերեն բառարանին: Դա բացատրվում է մեկ հատորանոց բառարանի կազմման յուրահատկություններով: Նախորդ նույնատիպ բառարանների հետ համեմատած, հեղինակն իր աշխատության մեջ կատարել է հետևյալ կրճատումները: Նախ, բառարանից հիմնականում բաց են թողնված կրավորական սեռի այն բայերը, որոնք հեշտությամբ կազմվում են համապատասխան ներգործական սեռի բայերից՝ -ся (сь) ածանցի միջոցով (օրինակ՝ взломать—взломаться, высеребрить—высеребриться): Այս ածանցով կազմված բառերից բառարանում զետեղված են միայն այնպիսիները, որոնք ցույց են տալիս շեղոք, փոխադարձ և անդրադարձ գործողություններ, օրինակ՝ гордиться, задуматься, нарумяниться, невеститься և այլն: Եթե -ся վերջածանցով կազմված վերը նշված բառաձևերն ունեն նաև կրավորական գործողություն արտահայտելու իմաստ (ինչպես՝ вкочматиться, называться I, прятаться և այլն), ապա բառարանում այդ բառի բոլոր նշանակությունների վերջում տրված է նաև հղում տվյալ բառի համապատասխան ներգործական ձևին: Բառարանի ուսական բառացանկ չեն մղտցրված նաև իգական սեռի անձ ցույց տվող այն գոյականները, որոնք վերջանում են -ка, -ница, -ица, -иха, -ша վերջածանցներով: Հեղինակն այդպես է վարվել, քանի որ նման կազմությամբ բառերը, ինչպես ինքն է նշում բառարանի առաջաբանում<sup>10</sup>, հայ ընթերցողի համար դյուրմբունելի են և հեշտությամբ թարգմանվում են համապատասխան գոյականով և ունի վերջածանցով: Օրինակ՝ наследник—наследница—ժառանգորդուհի, собеседник—собеседница—զրուցակցուհի, переводчик—переводчица—թարգմանչուհի, либерал—либералка—լիբերալուհի, румын—румынка—ուսմիներ, пловец—пловчиха—լողորդուհի և այլն: Սակայն պետք է նշել, որ այդ ածանցով կազմված ոչ բոլոր բառերն են հայերեն թարգմանվում ունի վերջածանցով կազմված ձևերով: Սա վերաբերում է հատկապես որևէ արհեստով զբաղվող կանանց ցույց տվող բառերին: Հայերենում քերականական սեռեր չկան, այդ

<sup>10</sup> Տե՛ս Ա. Մ. Սուքիասյան. Համառոտ ակնարկ սովետական շրջանի հայ-ուսերեն ընդհանուր բառարանագրության.—ՀՍՍՀ ԳԱ «Ճեղհկազիր» (հաս. գիտ.), 1963, № 12, էջ 48:

<sup>11</sup> Տե՛ս Ա. Ղարիբջան. Ուս-հայերեն բառարան. Երևան, 1977, էջ X:

պատճառով էլ որևէ զբաղմունք ունեցող կնոջը կամ տղամարդուն նշող առանձին բառեր հայերենում սովորաբար չեն գործածվում կամ չկան: Ռուսերենում այդպես չէ, այնտեղ արհեստներով կամ այլ գործերով զբաղվող մարդկանց հիմնականում նշում են բառային զույգերով, ինչպես՝ проповедник—проповедница, первокурсник—первокурсница, радист—радистка, бандит—бандитка, ткач—ткачиха և այլն: Ահա սրանից ելնելով՝ հայերենում միշտ չէ, որ ուսերենի -нха, -ница, -ка ածանցներով կազմված բառերը պետք է թարգմանել համապատասխան գոյականով և ունի վերջածանցով: Թրինակ՝ вкладчица, докладчица, вербовщица, первокурсница, десятиклассница և բազմաթիվ նման բառեր հայերեն թարգմանվում են կամ որևէ գոյականով կամ բառակապակցությամբ, առանց ունի ածանցի (ավանդատու, զեկուցող, հավաքագրող, բնիկ, առաջին կուրսեցի, տասներորդ դասարանցի), կամ էլ՝ համապատասխան գոյականով և կին կամ իգական սեռի անձ ցույց տվող այլ բառի հարադրությամբ (կին ավանդատու—ավանդատու կին, կին հավաքագրող, բնիկ՝ տեղացի կին, առաջին կուրսեցի ուսանողուհի, տասներորդ դասարանցի աշակերտուհի): Առանց ունի ածանցի են թարգմանվում նաև վերը նշված վերջածանցներով կազմված բազմաթիվ այլ բառեր ևս, օրինակ՝ այն բառերը, որոնք ցույց են տալիս բնավորության որևէ ընդգծված հատկանիշ ունեցող կին, ինչպես՝ стыдливица—ամոթխած՝ ամաչկոտ կին կամ աղջիկ, сонливица—քնկոտ կին, ленивица—ալարկոտ կին, сурверка—անահավատ կին, фантазерка—երազող կին կամ աղջիկ և այլն: Սրանց, ինչպես նաև նախորդ խմբի բառերի, ունի-ով ձևերը թեև հայերենի բառակազմական միջոցներով հնարավոր է կազմել, բայց այդ ձևերը հայերենում անսովոր են և չեն գործածվում (ինչպես՝ զեկուցողուհի, հավաքագրողուհի, քրեկոտուհի, ամոթխածուհի և այլն): -Ша վերջածանցով անձ ցույց տվող ուսերեն բառերի մեծ մասը նույնպես հայերեն չի թարգմանվում ունի ածանցով կազմված գոյականներով: Ռուսերենի այդ ածանցով կազմված բառերն այժմ հիմնականում ցույց են տալիս որևէ արհեստ, զբաղմունք, մասնագիտություն, կոչում ունեցող տղամարդու կին՝ ամուսին և, բնականաբար, հայերեն չեն թարգմանվում ունի-ով կազմված ձևերով, օրինակ՝ инженерша—ինժեների կին, генеральша—գեներալի կին, сенаторша—սենատորի կին, директорша—դիրեկտորի կին և այլն: Իհարկե կան նաև ուսերեն -ша ածանցով կազմված բառեր, որոնց հայերեն ունի ածանցով կազմված համարժեքները կան կամ ստեղծվել են վերջին տարիներին, ինչպես՝ секретарша—քարտուղարուհի, миллионерша—միլիոնատիրուհի և այլն:

Այս բառարանի ուսերեն բառացանկից, նախորդ մեծածավալ ռուս-հայերեն բառարանի համեմատությամբ, դուրս են թողնված նաև -есть, -ость ածանցներով կազմված որոշ վերացական գոյականներ, -анне, -енне վերջածանցներով կազմված բայանունների մի մասը: Այստեղ նշենք, որ ուսական բառարանագրության մեջ ընդհանրապես ընդունված չէ այդ բառերը մտցնել բառացանկերի մեջ:

Թեև ուսական բառացանկի ընտրության համար հեղինակն ուներ ամենալայն հնարավորություններ և բազմաթիվ աղբյուրներ, սակայն բառարանում այնուամենայնիվ կան որոշ բացթողումներ: Ըստ որում, բառարանում չեն ավելացված քառահատոր ռուս-հայերեն բառարանից դուրս մնացած այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ антисоветизм—հակասովետականություն, հակասովետիզմ, антисоциалистический—հակասոցիալիստական, безотцовщина—անհայրություն, конфронтация—առճակատում, пресс-центр—մամուլի կենտրոն, регион—շրջան և այլն: Բացի այդ, բառարանի ուսական բառացանկից վրիպել են մամուլում, գիտական-գեղարվեստական գրականու-

թյան մեջ, առօրյա կյանքում հանդիպող այլ բառեր ևս, օրինակ՝ бортин-женер—բորտինժեններ, джин—ջին (ոգի), диахрония, диахронический—համաժամանակաթյուն, համաժամանակյա, лавсан—լավսան, киносценарист—կինոսցենարիստ, телецентр—հեռուստալինտրոն, телеэкран—հե-ռուստաէկրան, финалист—կզրափակիչի մասնակից և այլն: Սրան հակառակ, բառարանում հանդիպում են որոշ գոհակարանություններ, ինչպես՝ мат, ма-терить, матерная брань (տե՛ս матерный), матерщина, по матушке ру-гать (տե՛ս матушка) և այլն: Սակայն այստեղ անհրաժեշտ է նշել, որ այդ բացթողումներն ու գոհակարանությունները բառարանում որակ չեն կազմում:

Հեղինակին հաջողվել է միահատոր ընդարձակ բառարանի ընձեռած հը-նարավորությունների սահմաններում լիովին ներկայացնել 1960-ական թթ. կեսերի գրական ուսերենի բառապաշարը:

Կեզվի պատմական զարգացման ընթացքում այլևս ճանապարհներով անխուսափելիորեն առաջանում են համանուններ: Բառագիտությունը և բա-ռարանագրությունը դեռևս վերջնական և միանշանակ լուծում չեն տվել հա-մանունների առանձնացման, տարբերակման հարցին, քանի որ համանուն-ներն իրենց հնչյունական կազմով բոլորովին նույնն են, բացի այդ, շատ հա-ճախ նաև դժվար է հստակորեն որոշել բազմիմաստության և համանունության սահմանը: Համանունները տարբեր աշխատություններում և բառարաններում առանձնացվում են զանազան եղանակներով ու սկզբունքներով՝ նայած թե հեղինակն ինչպես է մոտենում տվյալ խնդրին (բացառություն են կազմում պատուական համանունները, որոնց տարբերակումը ոչ մի առանձին դժվար-ություն չի ներկայացնում): Ռուս-հայերեն քառահատոր բառարանում նը-կատված են համանունների առանձնացման բազմաթիվ թերություններ, որոնք այդ բառարանը ժառանգել է իր հիմքը կազմող Ուշակովի «Ռուսաց լեզվի բա-ցատրական բառարանից»<sup>11</sup>: Քառահատորում տեղ գտած մեծ թվով սխալներ են. Ղարիբյանն իր բառարանում ուղղել է: Այսպես, միահատոր ուս-հայերեն բառարանում որպես առանձին բառահոգվածներ են ներկայացված հետևյալ բառերը՝ первое, второе, третье (որպես թվական և գոյական՝ ճաշա-տեսակ), будущее, прошлое (ածական և գոյական) заливное (ածական և գոյական) бычок (նվազական бык բառի և ձկան տեսակ), слог (վանկ և ոճ), заливаться (լցվել, ողողվել և զայլալել), задаваться (տրվել, հանձնա-րարվել և գոռոզանալ, մեծամտանալ) և այլն: Այս և շատ այլ բառեր քառա-հատոր բառարանում չեն առանձնացված իբրև համանուններ: Բայց, իրենց հերթին, բառի բազմիմաստության և համանունության որոշման հարցում սխալներ կան նաև այս բառարանում: Այդ սխալների մի մասը դալիս է նա-խորդ ուս-հայերեն բառարանից, ինչպես նաև քառահատոր «Ռուսաց լեզվի բացատրական բառարանից», որոնցում նույնպես հստակորեն չեն մշակված համանունների տարբերակման սկզբունքները: Բերենք բառային համանուն-ների մի քանի օրինակ, որոնք միահատոր բառարանում չեն առանձնացված իբրև ինքնուրույն բառեր, այլ ներկայացված են որպես միևնույն բառի տար-բեր իմաստներ. карабин (1. հրացանի տեսակ, 2. Օղակ՝ զսպանակավոր կեռիկ), лобан (1. մեծ ճակատ ունեցող, մեծաճակատ, 2. ձկան տեսակ), лисичка (1. փոքրիկ աղվես, 2. սնկի տեսակ՝ ձվատունկ), титан (1. աստ-վածություն հին հունական դիցաբանության մեջ, 2. քիմիական տարր, 3. հա-տուկ տեսակի ջեռուցող սարքավորում), лига (միություն, ընկերություն, ի-

<sup>11</sup> Յե՛ս Ի. Դ. Стрельцова. О некоторых принципах составления словарика русско-армянского словаря (на материале русско-армянского четырехтомного словаря).— 2002 ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1968, № 3, էջ 42—51:

դա, սակայն կա նաև սրա համանունը՝ ЛНГА—երաժշտական հատուկ նշան, որ բառարանում չի ներկայացված), ГУДОК (շշակ, սուլոց, սրա համանունը՝ ГУДОК—երաժշտական գործիք, նույնպես չկա բառարանում) և այլն:

Թարգմանական-երկրագլխյան բառարաններում առավել մեծ նշանակություն ունի քեռականական համանունների հստակ առանձնացումը և որպես առանձին գլխաբառ ներկայացնելը, քանի որ ռուսերենին վարժ շտիրապետող ընթերցողի համար դժվար կլինի բառարանում գտնել հարկավոր բառը և նրա թարգմանությունը:

Ռուսերենում, օրինակ, -ка վերջածանցն ունի մի քանի նշանակություն: Երբ մի որևէ մասնիկ, դրվելով միևնույն հիմքը վրա, նրանից կազմում է տարբեր իմաստներով բառեր, վերջիններս, մեր կարծիքով, բառարանում պետք է առանձնացվեն իբրև համանուններ: Այսպես, բառարանում չեն տարբերակված հետևյալ համանունները. амазонка (1. ամազոնուհի, հեծյալ կին, 2. հագուստի տեսակ), матроска (1. նավաստու կին, 2. հագուստի տեսակ), конфедератка (1. конфедерат բառի իգական սեռը, 2. գլխարկի տեսակ), чумишера (1. շերեփ, 2. տան սև աշխատանքները կատարող սպասուհի, փիր. փնթի մարդ), цыганочка (1. նվագ. цыган բառի, 2. պարի տեսակ) և այլն:

Այս բառարանում, ինչպես և նախորդ՝ քառահատոր բառարանում համանունների տարբերակման թերութուններն ավելի նկատելի են բայական համակարգում: Սա նույնպես պետք է բացատրել ռուսական լեզվաբանության և բառարանագրության մեջ այդ հարցի ոչ բավարար մշակվածությամբ: Այսպես, -ся վերջածանցով կազմված շատ մեծ քանակով բառեր բառարանում ներկայացված են որպես մեկ բառի տարբեր իմաստներ, այնինչ դրանք տարբեր բայերի ածանցավոր ձևեր են, որոնք տվյալ դեպքում ձևով համընկել են: Օրինակ՝ обваливаться (1. անկառ. обвалиться բայի և 2. անկառ. обваляться բայի), засиживаться (1. անկառ. засидеться բայի և 2. կրավ. засиживать բայից), спрягаться (1. впрягать вместе 2. о глаголах), намечаться (1. անկառ. наметиться—слегка обозначиться բայի և 2. предпологаться), окапываться (1. կրավ. окапывать բայից և 2. անկառ. окопаться բայի) և հարյուրավոր այլ բայեր: Այս բառարանում -ся մասնիկով կազմված բայաձևերի որոշ համանուններ էլ ուղղակի չեն ներկայացված (ո՛չ որպես առանձին բառահոգված, ո՛չ էլ իբրև բառի նշանակություն), օրինակ՝ обвеситься—կշռելիս սխալվել, սխալ կշռել (չկա՝ обвеситься II—իր վրա կախկիսել), разлетаться—1. անկառ. разлететься բայի, 2. ծիփալ, խռիվ. գալ (մազերի մասին), բացվել, այս ու այն կողմ՝ թռչել (փեշերի մասին) (չկա՝ разлетаться II—հրապուրվել թռչելով՝ թռիչքներով), душиться—անուշահոտություն օժիվել, իր վրա բույրաջուր (օծանելիք) ցանել (չկա՝ душиться II—իրեն խեղդել, իրեն խեղդելով ինքնասպան լինել) և մի քանի այլ բառեր:

Ռուսերեն բառը թարգմանելիս հեղինակը ձգտել է առավելագույնս օգտագործել հայերենի բառազանձը, հոմանիշների ողջ հարստությունը, որոնց միջոցով փորձել է ըստ հնարավորին սպասիչ ձևով ներկայացնել ռուսերեն բառի հիմնական և փոխաբերական իմաստները, նշանակությունների նրբերանգները: Ինչպես նշեցինք, բառարանում հոմանիշները դասավորված են այնպես, որ ռուսերեն բառին իմաստով առավել մոտ հայերեն հոմանիշը գտնվում է շարքի սկզբում: Ընդհանրապես ռուս-հայերեն բառարաններից հոմանիշներով ամենահարուստն այս բառարանն է: Այսպես, եթե тускнеть բառի առաջին նշանակության թարգմանության համար քառահատոր «Ռուս-հայերեն բառարանում» օգտագործված է երկու հոմանիշ, իսկ «Ռուս-հայերեն նոր բառարանում»՝ հինգ, ապա Ար. Ղարիբջանի բառարանում տրված է ութ հոմանիշ՝ պղտորվել, փայլատանալ, փայլը կորցնել, փայլազրկվել, փայլատել,

անգունանալ, անփայլանալ, խուճանալ: Այս ձևով են թարգմանված մեծ քանակությամբ այլ բառեր, օրինակ՝ отягощение—թարգմանված է 6 հոմանիշ բառերով (նախորդ բառարաններում համապատասխանաբար՝ 4 և 5), скромно—6 հոմանիշ (նախորդներում՝ 4 և 2), ткацкий—6 հոմանիշ (նախորդներում՝ 5 և 4), полукруг—թարգմանված է 5 բառով (նախորդներում՝ 2 և 1), захват 1-ին նշանակությամբ՝ թարգմանված է 7 հոմանիշներով (նախորդներում՝ 4 և 6) և այլն: Սակայն, ինչպես մեզ թվում է, հեղինակը որոշ դեպքերում ընկել է ծայրահեղության մեջ: Օրինակ՝ затирание բառը թարգմանվել է հայերեն քսանմեկ տարբեր բառերով և կապակցություններով՝ ջնջում, ջրնջելը, սրբելը, քսելով կամ քերելով՝ հարթելը, մաքրելը, մաքրում, ճզմում, ճզմել, սեղմում, սեղմելը, ճնշում, ճնշելը, հալածում, հալածելը, ետ մղելը, խոշրնդոտելը, կաշկանդում, կաշկանգելը, մաղում, մաղելը, քրքրելը: Բայց այս հայերեն համարժեքները ոչ թե ուսուցիչ բառի իմաստի տարբեր երանգներն են արտահայտում; այլ, փաստորեն, այդ բառի տարբեր նշանակությունները: Հենց ուսուցիչի բացատրական բառարաններում էլ затирание բառի այս նշանակություններն առանձնացված, միմյանցից բաժանված են իբրև այդ բառի տարբեր նշանակություններ (տե՛ս քառահատոր «Ռուսաց լեզվի բացատրական բառարանը», Ի. Ս. Օժեգովի «Ռուսաց լեզվի բառարանը»): Բառարանում թերի է նաև շատ այլ բառերի իմաստների տարբերակումը (ինչպես՝ сведение բառի առաջին նշանակությունը, որ թարգմանված է 20 բառով: сходжение—15 բառ և հոմանիշ, затягивание—19 բառ, подтягивание—20 բառ, вызывание—10 բառ և այլն):

Բառարանագիրը մեծ աշխատանք է կատարել ուսուցիչ բառերի իմաստները ճշգրտելու, դրանց բոլոր նշանակություններն ու նշանակությունների նրբաբանգները բառարանում ներկայացնելու ուղղությամբ: Իր վկայությունամբ, բառարանում, նախորդ նույնատիպ բառարանների համեմատությամբ, ալեկացված են շուրջ 30000 նոր բառահոգվածներ և իմաստներ<sup>12</sup>: Օրինակ, եթե накат բառը քառահատոր բառարանում ներկայացված էր 6 նշանակություններով, ապա Ղարիբյանի բառարանում բերված է 11 նշանակություն, այսպես նաև грубой բառը այդ բառարաններում ներկայացված է համապատասխանաբար՝ 3 և 5 իմաստներով, воздушный ածականը՝ 2 և 4, обложить բայը՝ 5 և 9, брать բայը՝ 18 և 23 և այլն: Ճիշտ է, այստեղ պետք է նշել, որ միհատորյակում ավելացված իմաստների մի մասը քառահատոր ուսուհայերեն բառարանում նույնպես առկա է, սակայն այնտեղ ներկայացված է իբրև որևէ նշանակության նրբերանգ:

Բառարանն առանձնապես հարուստ է ուղղորդիչ կտրոնիկային վերաբերող նոր բառերով և տերմիններով: Սա կապված է գիտության այդ ճյուղի՝ վերջին տարիներին ապրած շեշտակի վերելքի հետ: Այժմ դժվար է գտնել գիտության կամ մարդկային կենցաղի մի այնպիսի բնագավառ, որ լայնորեն ներթափանցած չլինեն ուղղորդիչ կտրոնային սարքավորումները: Նախորդ բառարանի համեմատությամբ Ար. Ղարիբյանի բառարանում (հիմնական մասում և երկրորդ հրատարակությանը կցված հավելվածում) ավելացված է радно-արմատով կազմված 62 նոր բառ, электро-արմատով կազմված 51 նոր բառ, теле- (հեռուստա, հեռուստատեսային) արմատով սկսվող՝ 27 նոր կազմովություն: Այս բառարանում մեծ է նաև կինոարվեստին վերաբերող նախորդ նույնատիպ բառարաններում տեղ չգտած նորակազմությունների թիվը (ընդամենը 51 նոր բառ. նշենք, որ «Ռուս-հայերեն նոր բառարանում» կա այդ արմատով կազմված միայն երկու բառ): Այստեղ առանձնապես պետք է ընդգծել այն խոշոր դերը, որ կատարել է Ար. Ղարիբյանը ուսուհայերեն բառարանագրության մեջ՝ առաջին անգամ հայերեն թարգմանելով և բառարան-

<sup>12</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան. Ռուս-հայերեն նոր բառարան.—«Գրքերի աշխարհ» 15 նոյեմբերի 1968:



նագրական մշակման ենթարկելով այժմ գրավոր և բանավոր խոսքում մեծ տարածում գտած, շատ գործածական այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ авиалиния, авиатрасса, автопарк, автопоезд, киножурнал, кинозвезда, кинохроника, киноархив, кинозал, телезритель, телестудия, телефильм, телестановка, радиожурнал, радиокомментатор, радиорепортаж, радиолиния, радиопизика, фотопллюстрация, фототовары, фотоэлектронный, фотэлемент, космонавт, космонавтика, космодром, ракета-носитель, электродойка, электролиния, электромобиль, электропоезд, ЭВМ և հազարավոր այլ բառեր:

Սույն բառարանում, նախորդ նույնատիպ բառարանների հետ համեմատած, թեև ավելի քիչ են բառերի բացատրությունները և նկարագրական թարգմանությունները, սակայն, դժբախտաբար, հեղինակին դեռևս չի հաջողվել լիովին ձերբազատվել ռուս-հայերեն բառարանագրության մեջ նկատվող այդ թերությունից: Ծիշտ է, այս բառարանում նկարագրական եղանակով են խարզմանված հիմնականում ռուսերենի յուրահատուկ ածանցներով կազմված այն բառերը, որոնց հայերեն համարժեքները մեկ բառով ներկայացնելը դժվար է, իսկ հաճախ էլ՝ անհնար, ինչպես՝ выговаривать—3. պայմանով իր օգտին վերապահել: Добросить—մինչև որոշ տեղ նետել, նետելով որոշ տեղ հասցնել: Перекачка—պոմպով քաշելը, պոմպով հեղուկը տեղափոխելը և այլն: Հեղինակը ճիշտ է վարվել, երբ այն փոխառությունների համար, որոնք այոց լեզվում չունեն իրենց համարժեքները և բառարանի թարգմանական բաժնում ներկայացված են միայն հայերեն տառադարձությամբ, փակագծերում տվել է հակիրճ բացատրություն՝ альпага—1. կենդր. արլազա (լասայի մի տեսակ): 2. արլազա (արլազայի բուրդ, այդ բրդից գործվածք): Амбир—արվ. ամպիր (ճարտարապետական ոճ): Импернал I—իմպերիալ (դրամ): Кессон—2. կեսոն (առաստաղի խոր ընկած ճարտարապետական զարդ): Лапта—1. լապտա (ռուսական ժողովրդական գնդակախաղ) և այլն: Նաև այն բառարանում բացատրված են նաև ոչ քիչ թվով այնպիսի բառեր, որոնց համարժեքները հայերենում հեշտ է ստեղծել, գտնել կամ նույնիսկ կան, օգտագործվում են և հասկանալի են հասարակության ամենալայն շերտերին: Սրինակ՝ вылов—2. ձկան ամբողջ որսը, որսուցած քանակը: Կարելի է ուղղակի արգալանակ: Выкупщик—փրկանք տալով զառտող, հետ գնող: Պետք է լինի՝ փրկագնող: Выжелтить—դեղին գույն տալ, դեղին գույնով կեղտոտել: Պետք է լինի՝ դեղնեցնել: Взъерепенить—զայրույթ՝ ցասում՝ գրգռվածություն առաջացնել: Թեև կան այդ իմաստներն արտահայտող հայերեն զարգացնել, գրգռել բառերը և այլն:

Ռուսերեն բառերի թարգմանության ժամանակ հայերեն համարժեքի հետ նաև բառի բացատրությունը տալը, տվյալ դեպքում, բառարանից օգտվողի հասար որևէ արժեք չի ներկայացնում, այլ միայն ավելացնում է բառարանի ծավալը, դժվարացնում նրա օգտագործումը: Բոլորովին բացատրելու կարիք չկար, օրինակ, հետևյալ բառերի իմաստները՝ планетарий—պլանետարիում (էրկնքի պատկերը ցույց տվող շենք և գործիք): Капелла—1. կապելլա, երգեցիկ խումբ նաև՝ երգիչներից ու նվագողներից կազմված անսամբլ: Неполняемость—անիրագործելիություն, կատարելն (իրագործելն) անհնար: Иедокос—1. թերահնձում, թերահնձելը, պահանջվածից քիչ հնձելը: Автол—ավտոլ, քայտոլ (ավտոների և տրակտորների շարժիչների համար): Астероиды—աստերոիդներ, աստղակերպեր, փոքր մոլորակներ (պտտվում են արևի շուրջը Յուպիտերի և Մարսի ոլորտների միջև) և այլն:

Բառարանում մեծ թվով ռուսերեն բառեր չեն թարգմանված, այլ ուղղակի տառադարձված են հայերեն, թեև դրանց համարժեքները հայերենում կան կամ էլ հայոց լեզվի բառակազմական միջոցներով հնարավոր է ստեղծել, օր. гинекология—գինեկոլոգիա (չկա՝ կնախտաբանություն), гомеопат—հոմեոպատ (չկա հայերեն ձևը՝ նմանաբույժ), контузия—կոնտուզիա, օրգանիզմի ընդհանուր կամ մասնակի վնասվածք առանց արտաքին երևույթի (չկա՝ աւլչարդ), диагностика—դիագնոստիկա (չկա՝ ախտորոշաբանություն), ком-

пресс—կոմպրես (չկա՝ թրշոց) և այլն: է՛լ ավելի մեծ թիվ են կազմում այն բառերը, որոնց թարգմանությունն համար, նույնիսկ լիարժեք հայերեն համապատասխանությունների դեպքում, բերված են նաև ուսուսական տառադարձությունները, որոնք այս դեպքում ավելորդ են, ինչպես՝ адмирал—ծովակալ, ադմիրալ, версия—վերսիա, մեկնակերպ, диабет—շաքարախտ, դիաբետ, диатноз—դիագնոզ, ախտորոշում, հիվանդությունը որոշելը, диктор—դիկտոր, հաշորդավար, зоопарк—կենդանաբանական այգի, զոոպարկ և այլն: Այնուհետև, բառարանում կա և թարգմանված է 6НО- (կենսա-) մասնիկը, սակայն այն բառերի մի մասը, որոնցում այս մասնիկը նշանակում է կենսաբանական գիտության հետ կապված որևէ այլ գիտաճյուղ, երևույթ, առարկա, բառարանում չի թարգմանված, այլ միայն տառադարձված է հայերեն: Орինակ՝ биодинамика—բիոդինամիկա (պետք է լինի՝ կենսադինամիկա, կենսաուժաբանություն), биофизика—բիոֆիզիկա (ճիշտ թարգմանությունն է՝ կենսաֆիզիկա), биохимия—բիոքիմիա (այժմ՝ կենսաքիմիա): Այսպես են բառարանում ներկայացված նաև բազմաթիվ այլ արմատներից կազմված բառեր, ինչպես՝ гидробиология—հիդրոբիոլոգիա (այժմ՝ ջրակենսաբանություն), гидрогеология—հիդրոգեոլոգիա (փոխանակ՝ ջրաերկրաբանություն), гидромелиорация—հիդրոմելիորացիա (այժմ՝ ջրամելիորացիա), зоохимия—զոոքիմիա (պետք է լինի՝ կենդանաբանական քիմիա), профорг—պրոֆկազմակերպիչ (փոխանակ՝ արհկազմակերպիչ), профорганизация—պրոֆկազմակերպություն (փոխանակ՝ արհկազմակերպություն), профуполномоченный—պրոֆլիազոր (պետք է լինի՝ արհմիութենական լիազոր) և այլն: Այժմ այս և նման կազմություն ունեցող բառերի միակ ճիշտ, հանձնարարելի, գրական ձևն է համարվում հայերեն թարգմանությունը և ոչ թե փոխառված կամ կիսապատճենված տարբերակը:

Ինչպես հայտնի է, տերմինների թարգմանության միակ ճիշտ սկզբունքը մեկ տերմինը մեկ համարժեք բառով թարգմտելն է: Քննության առարկա բառարանում այդ սկզբունքը ոչ միշտ է պահպանված: Հեղինակը բազմաթիվ ուսուսներն և տերմիններ թարգմանել է հայերենի երկու և ավելի հոմանիշներով՝ շատ հաճախ տալով նաև այդ տերմինների հայերեն տառադարձումը: Իհարկե դրանք հիմնականում այն տերմիններն են, որոնց թարգմանությունը բառարանի հրատարակության ժամանակ դեռևս չէր կայունացել, միօրինակ չէր: Այդ պատճառով էլ բառարանագիրը դրանք մի քանի հոմանիշներով է թարգմանել՝ հայերեն համարժեքի վերջնական ընտրությունը թողնելով ապագային: Орինակ՝ мальгоза—ֆիմ. ածիկաշաքար, կասկաշաքար, գարեշաքար, մաստաշաքար: Платиметр—Երկրբլխ. հարթաչափ, մակերեսաչափ (գործիք): Կամ էլ՝ ализарин—Բիմ. ալիզարին, տորոնի ներկանյութ, տորոնաներկ, ալածահրի, ալչահրա: Колорит—1. գեղնկրչ. կոլորիտ, երանգավորում, երանգ, գունեղություն, գունագեղություն: Кабель—տեխ. կաբել, մետաղամալուխ, մետաղե կառան, մետաղալարերից հյուսված ճոպան, հաստ պարան: Այս վերջին դեպքում, հեղինակն ինքն էլ զգալով հայերեն թարգմանությունների ոչ հաջող լինելը, դրանց երկարաշնչությունն ու օգտագործման անհարմարությունը, բերված օրինակների թարգմանության համար գործածել է միայն տառադարձված ձևը՝ телефонный—հեռախոսային կաբել. подводный—ստորջրյա կաբել. воздушный—օդային կաբել. подземный—ստորերկրյա կաբել:

Բառարանում կան նաև որոշ քանակությամբ անհարկի օտար փոխառություններ (մանավանդ արևելյան լեզուներից կատարված) և բարբառային բառեր: Հեղինակը չի կարողացել ազատվել նույնատիպ նախորդ բառարանի նրամանօրինակ բառերից: Ավելին, նույնությամբ բառարան է տեղափոխված քառահատոր բառարանում տեղ գտած անհարկի օտարաբանությունների ու բարբառային բառերի մեծ մասը (ինչպես՝ коврик—խալիչա, навес—չարգալ, нещечко—ազիգ՝ թանկագին անձ, фундук—ֆնդուկ, պնդուկ, шту-

карство—օլիմբազուլթյուններ, пижик—կոլոտիկ անձ և այլն), բացի այդ միհատորյակում ավելացած են մի քանի նոր այդպիսի բառեր, օրինակ՝ виноградина—խաղողահատիկ, խաղողահատ, գիլա, кунак—գոստ, դոնադ, բարեկամ, самоочевидный—աշկարա, ինքնին ակներև՝ ակնհայտ և այլն:

Բազմաթիվ օտար բառերի հայերեն թարգմանությունը առաջին անգամ իր բառարանում փորձել է տալ Ար. Ղարիբջանը: Հմտորեն օգտվելով հայերենի բառակազմական լայն հնարավորություններից, հեղինակը փորձել է կերտել, ստեղծել նախորդ բառարաններում չթարգմանված, բայց հեշտ բնկավող շատ բառերի հայերեն համարժեքները: Այդպիսի բառերի թարգմանության վերջում շաճախ տրված են նաև ուսերեն բառերի հայերեն տառադարձված ձևերը: Իհարկե, մեկ հեղինակ երբեք էլ ի վիճակի չէ ստեղծելու հարյուրավոր և հարյուրավոր բառեր, որոնք կարողանան ընդունվել հասարակության կողմից, լայնորեն գործածվեն, ստանան «քաղաքացիության իրավունք»: Սակայն Ար. Ղարիբջանի բառակերտումներից շատերն ստացվել են բավականին հաջող, այժմ լայն տարածում են գտել և մտել են այս ուս-հայերեն բառարանի ստեղծումից հետո լույս տեսած հայոց լեզվի բացատրական բառարանները: Այսպես, բառարանի միայն ա և ճ տառերում մենք հաշվել ենք 77 (46 և 31) այդպիսի հաջող նորակազմություն: Օրինակ՝ акцентология—շեշտաբանություն, артикул—ապրանքատեսակ, астроботаника—աստղաբուսաբանություն, астронавт—աստղանավորդ, атомник—ատոմագետ, аэробы—օդակյացներ, аэрофотоснимок—օդալուսանկար, аэрофотосъёмка—օդալուսանկարահանում, аэрация—օդահագեցում, аванпост—առաջադիրք, банк II—խաղաղամ, безъядерный—միջուկազերծ, бензинохранилище—բենզինապահեստ, бидон—թիթեղաման, бластома—ծլանյութ, блокирование—ուղեփակում, ուղեկապում, буровая скважина (տե՛ս буровой)—հորատանցք, боезапас—մարտապաշար, оаզմապաշար, бадмин он—փետրազնդակ, бампер—բախարգել, бра—որմնալամպ և այլն: Իսկ հեղինակի նորաստեղծ բառերի որոշ մասը առայժմ տարածում չի գտել և այդպես էլ մնացել է բառարանում, օրինակ՝ дебют—առաջնախաղ, խաղասկիզբ (շախմատում), деформация—ձևալլալում, дирижер—երաժշտավար, тайм—կիսապահ, կիսաժամ, խաղամաս, чемпионат—հաղթորդամարտ, հաղթամարցում և այլն:

Հեղինակին երբեմն չի հաջողվել գտնել ուսերեն բառերի տարածված և լեզվում գործածական հայերեն համարժեքները, ինչպես՝ аэроплан—աերոպլան, սավառնակ (չկա՝ օդանավ բառը), диалог—տրամախոսություն, դիալոգ, գրուլց (հարց ու պատասխանով) (չկա՝ երկխոսություն), дублировать—2. կրկնորդել, կրկնակել, պատճենորդել, ~ фильм ֆիլմը կրկնորդել, ֆիլմի պատճենը այլ լեզվով հանել (չկա՝ կրկնօրինակել), край—3. վարչական խոշոր միավոր, երկիր. Приморский ~ Մովամերձ երկիր, Краснодарский ~ Կրասնոդարի երկիր (ճիշտ ձևն է երկրամաս, Կրասնոդարի երկրամաս, Պրիմորյեի երկրամաս), портретист—պատկերանկարիչ, պատկերահան (պետք է լինի՝ դիմանկարիչ) և այլն: Ընդամենը, մեր հաշվումներով, բառարանում կան մոտ 2000 բառերի (չհաշված բառակապակցությունները) այսպիսի թերի ու սխալ թարգմանություններ:

Իացի բառերի թարգմանությունների այս թերություններից, բառարանում տեղ են գտել նաև կապակցությունների, դարձվածքների թերի, սխալ, երկակի թարգմանություններ: Ընդ որում, այդ կապակցություններով անվանվող երկվույթները, հասկացությունները հայ ժողովրդին անծանոթ չեն, խորթ չեն, ընդհակառակը՝ առօրյա կյանքում, մամուլում և հեռուստատեսությամբ շատ հաճախ են գործածվում և առավել ևս դարմանուլի է, որ բառարանում ճիշտ չեն թարգմանված: Օրինակ՝ Капитан команды (տե՛ս капитан)—թիմի կապի-

տան (ճիշտ ձևն է՝ թիմի ավազ), летчик-испытатель (տե՛ս испытатель) — փորձարկիչ օդաչու (փոխանակ՝ փորձարկող օդաչու), отрез на пальто (տե՛ս отрез բառի երկրորդ նշանակությունը) — վերարկովի մի կտրոն (վրձանակ՝ վերարկուի կտոր) և այլն:

Ի տարբերություն նախորդ բառարանի, հեղինակը միևնույն դարձվածքը կամ բառակապակցությունը իր բառարանում շատ հաճախ տեղադրել է մի քանի բառահոգվածներում: Սա ոչ միայն մեծացրել է բառարանի ծավալը, այլև տեղիք է տվել նույն դարձվածաբանական միավորի կամ կայուն բառակապակցության երկակի, միմյանցից տարբեր թարգմանությունների: Օրինակ՝ СОБАКА на сене դարձվածքը 1088 էջում թարգմանված է՝ «շունը խոտի վրա, ինքը չի օգտվում, ուրիշներին էլ թույլ չի տալիս օգտվելու», իսկ 1136 էջում՝ «իրեն պետք չի, ուրիշին էլ չի տալիս»: Бросать камешек в чей-л. огород դարձվածքը թարգմանված է՝ 640-րդ էջում՝ «մեկի բակը քար գցել, մեկի հասցեին ակնարկ անել», 372-րդ էջում՝ «բոստանը քար գցել, մեկի հասցեին խոսք սասել»: Իսկ метать бисер перед свиньями դարձվածքը բառարանում երեք տարբեր տեղերում (էջ 14, 475—476, 1076) հայերեն ներկայացված է երեք տարբեր համարժեքներով՝ «խոզերի առաջ մարգարիտ շաղ տալ, լսողներին անմատչելի ստեբի: շոպլել» «խոզերի առաջ մարգարիտ նետել (ածել)» և «խոզերի առաջ մարգարիտ ցանել»: Железный лом բառակապակցությունը թարգմանված է երկու տարբերակով, որոնք այժմ չեն գործածվում՝ «երկաթաջարդ» (էջ 241) և «երկաթի բեկոտվածք» (էջ 446, ճիշտ ձևն է՝ երկաթի ջարդոն): Собственный корреспондент անվանումը ևս ունի կրկնակի թարգմանություն՝ «սեփական թղթակից (լրագրի)» (էջ 402) և «հատուկ թղթակից» (էջ 1133), երկրորդ դեպքում շփոթված է СОБСТВЕННЫЙ բառի իմաստը. այս կապակցության մեջ այն նշանակում է սեփական, մի բանի (տվյալ դեպքում որևէ խմբագրության) պատկանող և ոչ թե՛ հատուկ, ի դեպ՝ բառարանում կա նաև հատուկ քղրակից անվանումը ուսուցիչներին՝ իր ճիշտ թարգմանությամբ (տե՛ս СПЕЦИАЛЬНЫЙ բառի 2-րդ նշանակությունը) և այլն: Ընդհանրապես այս բառարանում որոշ անորոշություն է նկատվում դարձվածքների և բառակապակցությունների տեղաբաշխման համակարգում: Ըստ երևույթին առավել ճիշտ կլինեին այդպիսի կապակցությունները ներկայացնել ուսուցիչ բառարանագրության մեջ, ինչպես նաև քառահատոր բառարանում, ընդունված սկզբունքով, այն է՝ դարձվածաբանական միավորը կամ բառակապակցությունը տեղադրել կապակցության հիմնաբառի բառահոգվածում, իսկ մյուս դեպքերում անել հղում թարգմանված ձևվին, որը է հնարավորություն կտար խոստովելու ավելորդ կրկնություններից: Դարձվածքների թարգմանության հարցում նկատվում է նույն թերությունը. ինչ կաք բառերի թարգմանության մեջ. նույնիսկ այն դեպքերում, երբ ուսուցիչներն դարձվածքն ունի իր հայերեն լրիվ համարժեքը, հաճախ տրված է նաև նրա բացատրությունը:

Ար. Ղարիբջանի միահատոր «Ռուս-հայերեն բառարանն» իր խոշոր դերն է խաղացել ու այսօր էլ խաղում է հայ ժողովրդի ամենատարբեր խավերի կողմից ուսուցիչ լեզուն սովորելու և ուսումնասիրելու գործում: Այս բառարանի ստեղծումը մի նոր առաջընթաց էր ուսուցիչներին բառարանագրության մեջ:

Բառարանի ուսուցիչ բառացանկը համարված է նախորդ նույնատիպ բառարանների հրատարակումից հետո մեր երկրի հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական, տնտեսական և մշակութային կյանքում տեղի ունեցած փոփոխություններով, զարգացմամբ, առաջընթացով պայմանավորված բազմաթիվ նոր երևույթների, հասկացությունների, գիտության նոր ճյուղերի, առարկաների անվանումներով: Այս բառարանը, կարելի է ասել, լրիվ է արտացոլում XIX դարի կեսերից մինչև իր կազմման ժամանակաշրջանը ընդգրկող ուսուցիչ գրական լեզվի ամբողջ անհրաժեշտ բառապաշարը:

Սույն բառարանը Ռուս-հայերեն և ընդհանրապես ուսուցիչ բառարանագրության մեջ նկատելի նորություններ է բերում իր բառահոգվածի կառուցվածքով:

Հեղինակը շատ դիպուկ և մտածված կերպով է ընտրել բառարանի ցուցադրական նյութը: Ռուս-հայերեն բառարանագրության մեջ ցուցադրական նյութի ընտրության և մատուցման հարցերը իրենց գիտական և, մեր կարծիքով, վերջնական լուծումն ստացել են այս բառարանում: Պատահական չէ, որ այժմ հայերենին առնչվող երկրեզվյան նոր բառարաններում կիրառվում է ցուցադրական նյութի մատուցման՝ այս բառարանում ընդունված սկզբունքը<sup>13</sup>:

Մեծ է բառարանի ավանդը հայոց լեզվի բառապաշարի նորմավորման և մանավանդ հայերենի տերմինաբանության հարստացման գործում: Նրանում, ինչպես նշեցինք, առաջին անգամ բառարանագրական մշակման են ենթարկված և հայերեն են թարգմանված հազարավոր նորակազմություններ, տերմիններ:

Սակայն բառարանը զերծ չէ նաև թերություններից: Նրանում դեռևս զգալի տեղ են գրադեցնում բառերի բացատրությունները և նկարագրական թարգմանությունները: Բառարանի թարգմանաչան՝ հալկական բաժնում հեղինակը չի կարողացել լրիվ ազատվել բարբառային բառերից և անհարկի օտարաբանություններից, ոտներեն բառի ավելորդ տառադարձումներից: Կան թերություններ համանունների առանձնացման հարցում, դարձվածաբանական միպորներն տեղաբաշխման և թարգմանության խնդրում: Որոշ դեպքերում հստակորեն չեն առանձնացված ոտներեն բառի նշանակությունները և իմաստային նրբերանգները:

Ստեղծյալ լրնցված քան երկու տասնամյակ առաջ (բառարանի տպագրությունը սկսվել է 1964 թվականին), սույն «Ռուս-հայերեն բառարան» այժմ որոշ չափով հնացել է և կարիք ունի վերամշակման և լրացման:

## КРИТИЧЕСКИЙ ОБЗОР «РУССКО-АРМЯНСКОГО СЛОВАРЯ» А. ГАРИБЯНА

М. А. ФАЛАКЯН

### Резюме

«Русско-армянский словарь» А. Гарибяна (Ереван, 1968, переиздания 1977 и 1983 гг.) содержит 85 000 словарных статей и около 20 000 фразеологических единиц.

Русский словник словаря полностью отражает всю общеупотребительную лексику русского литературного языка конца XIX столетия—начала 60-х гг. нашего века. Данный словарь привносит очевидную новизну в русско-армянскую лексикографию построением своей словарной статьи. Велика роль словаря в деле обогащения и нормирования словарного состава и особенно терминологии армянского языка. В нем впервые получили лексикографическую разработку и были переведены на армянский язык тысячи неологизмов и чужих терминов. Автор точно и продуманно отобрал и преподнес иллюстрационный материал словаря.

Однако, в словаре есть и определенные недостатки. В нем еще имеют место толкование и описание слов вместо их перевода. В переводную часть словаря проникли некоторые диалектизмы и варваризмы. Наблюдаются некоторые недостатки и в выделении омонимов.

«Русско-армянский словарь» А. Гарибяна имел и имеет огромное значение в деле изучения русского языка.

<sup>13</sup> Տե՛ս Գ. Մ. Անդրեասյան. Գերմաներեն-հայերեն բառարան. Երևան, 1976: Անդրեան-հայերեն բառարան. Խմբ. Հ. Ասմանզույանի և Հ. Հովհաննիսյանի. Երևան, 1984: